

ՄԵՃՄՈՒԱԿԱԿԱՆ ՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pera 65

Համբարսալ իրիսեմա եսնի ՉԱՐՇԵՆՊԻՆՆԻ ՎԵ ԶՈՒՄԱՍ ԻՐԹԻՍԻ

կիւնդերի ներքոյ օրումուր:

مجموعه اخبار

بكاوغلى قسم جادوى نوسرو ٦٥

Հաղէթաւա միւթէալիդ խոսուած իշին ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճաւթ օրումա. — Իտարէխանէ՛ Պէյոլունտա ճատտէի քէպիրտէ ն ? 65

ՍՈՒԳԻ ՕՐԸ

Աւագ Հինգշաբթի...

Ակամայ ախնարկ մըն է որ կը նեւ տենք դէպի քսան դար առաջ և ժամանակի ու անցեալի ամպերուն մէջէն կ'ընդհարենք դէմք մը, ա'յնչափ անուշ որչափ մեղամաղձոտ, տըժագոյն, նիհար դէմք մը որուն խորշումները շատ մը ցաւեր ու անքուն անցում գիշերները կը մատնէ, որուն աչքերը աստուածային նշոյլ մը կ'արձակեն, աչքեր որոնց մէջ սիրոյ, անձնագործութեան ու խոնարհութեան շողերը կը ցոլան:

Յիսուսի դէմքն է այդ:

Գողգոթային կատարը ահագին ամբոխ մը կը խոնուի, ամբոխ մը որուն սրտին մէջ ուրիշ գագաթներ կայ, բայց եթէ անգիծութիւն ու առեւտրութիւն, ամբոխ մը անուր, քրտաձիւն կիրքով մը վառուած, վերջապէս ամբոխ մը որ եկած հաւաքուած է հող՝ իմաստասէրներու իմաստասէրին, իշխաններու իշխանին, տիեզերքներուն արարիչին դէմ լի թշնամութեամբ:

Սեւ խաչը մէջտեղ կանգնած է և այդ խաչին վրայ Յիսուս, Ան որ մէկ չունչովը կրնայ աշխարհներու վերջակէտը դնել, Ան որ Աստուծոյ դէմ է, Աստուծոյ է, ալֆան ու օմեղան, սկիզբը ու վերջը: Խաչին շուրջը հաւաքուած աղտոտ ամբոխը լիբը ու անբարիշտ հայհոյութիւններ կ'ողղէ խաչալին, կը ծաղրէ ու կը հեգնէ զայն, կը տանջէ զայն, կը թքնէ անոր երեսին. և ան, փոխանակ կատողելու, ան որ կրնայ միայն իր մէկ եղիցիովը զանոնք գետին տապալել ան կը համբերէ և համբերելէ աւելի՝ կ'արտասանէ խօսք մը, իր Հօրը Աստուծոյ ուղղուած և իր թշնամիներուն, զինք մեռցնողներուն ու խաչը հանողներուն նկատմամբ, խօսք մը զոր պիտի չկրնային մոռնալ Պուտոսայ ու Սոկրատ, և որ ամբողջ քրիստոնեայ և հակաքրիստոնեայ փիլիսոփայութիւններու հիմը պիտի ըլլար յետոյ. — Հա՛յր, բոլոր յոյսս զի ոչ գիտեմ զինչ գործես:

Ալ ասկէ անդին կարելի չէ երեւակայել, այսչափ անձնագործութիւն, այսչափ սէր իր թշնամիներուն նըկատմամբ... Աստուած իմ, երբ որ կը կարգամ քու տանջանքներուդ պատմութիւնը, — և կը կարգամ յաճախ — երբ կը մտաբերեմ քու չարչարանքներդ, հաւատա՛, ամէն ընթերցումիս կը սպասեմ որ շանթ մը արձակես քու թշնամիներուդ վրէ:

րայ, զանոնք ամէնքը մէկանց քու առջեւդ խոնարհեցնես, ճանչցնես, հաստատել տաս անոնց, քու աստուածութիւնդ. բայց, չէ՛, դուն փոխանակ զանոնք պատժելու՝ կը ներես անոնց և կը խնդրես նաեւ քու Հօր՝ մէջդ՝ որ ա'ն ալ ներէ... Ինչո՞ւ, ինչո՞ւ այսչափ ներողամտութիւն, անձնութիւնութիւն, — որովհետեւ դուն՝ մեր մարդկային գաճաճութիւնը չունիս, որովհետեւ դուն աստուածային զգացումներով օժտուած իշած ես երկիր և որովհետեւ քու մէկ հատիկ նշանաբանդ է Սէ՛ր: Հնդիկ փիլիսոփան ալ սէր քարոզեց, Պուտոսայ ալ եղբայրսիրութիւն, անձնութիւնութիւն վարդապետեց, Սոկրատ ալ նոյնը կրկնեց, բոլոր իմաստասէրները նոյն բանաձեւերը յեղեցին, Վիրգիլիոս, Օվիտիոս ալ սէրը քերթեցին, սէրը պաշտեցին, սէրը աստուածացեցին, բայց, ո՛ւր, Տէ՛ր իմ, քու քարոզած Սէրդ և ո՛ւր անոնց սէրը. Երեսներ, քառանգներ կան իրարու մէջ: Դուն ո՛ւր և ո՛ւր Պուտոսայ, ո՛ւր Սոկրատ, ո՛ւր Վիրգիլ, ո՛ւր Օվիտ... անոնց քերթած, անոնց վարդապետած սէրը երկրային ու իրապաշտ սէրն էր, մինչդեռ դուն երկնային Սէրը սովորեցուցիր, վսե՛մ, իսե՛մ սէրը...

Ո՛վ Յիսուս, Դուն հասկցուցիր մարդկութեան թէ խոնարհները ըստէպ մեծերն են. դուն խոնարհութիւնը սիրեցիր, խոնարհութեամբ ապրեցար ու խոնարհութեամբ մեռար քու կամբողջ: Եթէ ուզէիր, ո՞ր պալատը, ո՞ր կայսերական գահը չպիտի բացուէր քու առջեւ, բայց, դուն չուզեցիր, դուն նախընտրեցիր խոնարհութիւնը, աղքատութիւնը և այսօր բոլոր խոնարհները, բոլոր աղքատները քեզմով կը միութարուին. փիլիսոփան որ անօթի մնաց, բանաստեղծը որ անօթի մեռաւ և քրիստոնեան որ ուտելու պատառ մը հաց չգտաւ, անոնք քու մէջդ սփռեցին մը գտան և հասկացան թէ բո՛ւն խոնարհութիւնը, բուն աղքատութիւնը, միայն մտքի, հոգիի խոնարհութեան, աղքատութեան մէջ կը կայանան: Եւ ի՞նչ եղաւ ասոր արդիւնքը: Մինչ հնդիկ իմաստասէրը անձնասպանութիւն կը քարոզէր, մինչ ան յոռետեսութեան ու ներվանայական խորհուրդներու ու է ովկէանին մէջ կը մխրճէր միտքերը, դուն, փոխանակ այդ յոռետեսութեան, քու աստուածային լաւատեսութիւնդ դրէր, դուն դէպի երկինքներու կապոյտը թռցնել տուիր բոլոր քու հետեւողներուդ հոգին. յուսահատներուն Աստուծոյ յոյսը տուիր, տարա-

բախտներուն երկինքը արքայութիւնը խօստացար. ըսի՛ր թէ երկրի մէջ տանջողները երկինքի մէջ պիտի ուրախանան. դուն անձնասպանութեան սե՛ւ սե՛ւ գաղափարները փարատեցիր մարդոց միտքերէն, զանոնք դէպի քեզի բարձրացուցիր և ամբողջ երեսուն երեք տարի, դուն իսկ ինքզինքդ աշխարհին օրինակ հանգիստեցիր՝ քարոզեցիր, խօսեցար, վարդապետեցիր. — Հոգ չէ՛, իտանարհ, աղքատ ապրեցէ՛ք, բա՛ց, քրիստոնեայ, բարի՛ ապրեցէ՛ք:

Է՛լը... ամէնէն աւելի նախաձեռնած, արհամարուած կենդանին, էլը՝ կենդանիներուն ամէնէն խոնարհը, դուն զայն սիրեցիր, անոր վրայ հեծար ու պտտեցար ամբողջ քաղաքին մէջ՝ հետեւողներէն, քեզ սիրողներէն չըլլապատուած. քու առաջին առաքեալներդ աղքատիկ ձկնորսները եղան, անոնց կեանքին մէջ մտար, անոնց հետ բարեկամութիւն ըրիր և անոնց հետ ապրեցար... խոնարհութիւն, այդ բառը զոր մինչեւ քու գալուստդ կ'անգիտանայինք, քու մէջդ մարմնացած տեսանք. այո՛, յոյն, հռոմէացի իմաստասէրները, քերթողներն ալ խոնարհ էին... բայց, ի՞նչ էր Տիոգիւնէսի և կամ ուրիշներու խոնարհութիւնը, բայց եթէ փողոցային գարշաճոտ աղտոտութիւն մը. դուն խոնարհ եղար, առանց աղտոտ կամ գարշելի ըլլալու. դուն խոնարհ ու բարձր եղար միանգամայն, բարձր քու խոնարհութեանդ մէջ իսկ. երբ քու մէկ երեսդ ապտակեցին, միւսը դարձուցիր, երբ երեսդ թփէին, այլ նախախնայեցիր և անոնց ո՛ւ և է տրտունջը: Յիսուս, դուն այնչափ խոնարհութիւնը սիրեցիր որ, Աստուած մը ըլլալովդ՝ ձգեցիր քու երկնային գահդ, երկիր իջար, առաջագործի մը զաւակ ըլլալու, մեղի հետ ապրելու համար. մենք քեզ ատեցինք, բայց դուն մեր այդ ասպուշ արհամարհանքին հակառակ՝ մեզ սիրեցիր, մեզի՛ք քրիստոնեութեան Աստուածը, երկնային ճշմարտութիւնները ճանչցուցիր և քու սէրդ այն աստիճան ծայրայեղութեան դընաց, որ նոյն իսկ մեզի ազատելու համար, դուն ինքզինքդ զոհեցիր:

Եւ ահա՛ հիմա Գողգոթային գահաթոն ես, քառաթեւեան խաչին վրայ գամուած, արիւններու մէջ թաթախուած, ամէն կողմէդ վիրաւորուած. երկու կողմդ մէյմէկ աւազակներ կան գամուած. դուն Աստուած՝ աւազակներու մէջտեղը... Ի՞նչ արհաւիրք, ի՞նչ ցնորք, Աստուած իմ:

Խաչին շուրջը աղտոտ ամբոխը կը խոնուի տակաւ և քեզ կը ծաղրեն, կը հեգնեն՝ քեզ...

— Եթէ Աստուած ես, վար իջիր խաչէդ:

Եւ դուն կը համբերես... Վերջին պահուդ մայրդ կը մտածես. ա՛հ, ի՞նչ է արդեօք այդ միջոցին մօրդ սիրտը. խեղճ մայր... Ի՞նչ կը զգար արդեօք՝ զաւակը՝ խաչին վրայ, և ան, մայրը, ան խաչին ոտքը. զաւակին տանջուիլը կը տեսնէ, անոր կրած ցաւերը կ'երեւակայէ... և սակայն ձեռքէն ուրիշ բան չի գար, բայց եթէ լա՛ւ, լա՛ւ... Յիսուս ամէնէն աւելի կը զգայ թէ ի՞նչպէս կը բղկտի իր մօրը սիրտը... կը զգայ, բայց, ի՞նչ ընէ... մէկ կողմը մայրը կայ, իսկ միւս կողմը ամբողջ մարդկութիւնը:

... Ու կը մեռնի Յիսուս: Ամբողջ բնութիւնը կը դողդաղ պահ մը... պահ մը սակայն, եթէ այդ պահը քիչ մըն ալ աւելի երթար, ամբողջ տիեզերքը կը փլի... Ելլադայի մէջ, յոյն իմաստասէր մը որ կը տեսնէ բնութեան այս սարձսուռը, կ'ըսէ.

— Կա՛մ աշխարհիս վերջը եկաւ և կա՛մ Աստուծոյդդին կը մեռնի: Ու մեռած Յիսուսի խաչին քովը կեցող այն անհաւատոր որ քիչ առաջ արհամարհանքի ախնարկ մը կ'ողղէր Անոր, կը հաւատայ...

Անոր հետ շատեր ալ կը հաւաք տան:

Տէ՛ր, գրիչը մատներուս մէջ կը դողդաղայ, չեմ կրնար աւելի առաջ երթալ, կ'ողբեմ ծնրադրել քու առաջեւ, աղօթել քեզի, բայց, շատ մեծ զաւոր կը զգամ ինքզինքս. մաքուր չէ բերանս քու սուրբ անունդ արժանանելու համար: Աղտոնիներու, հրեշտակներու վայել է միայն քեզ փառաբանել, քեզի աղօթել... Տէ՛ր, դուն որ ինքզինքդ զոհեցիր մեզի փրկելու համար, դուն որ խաչեալ աւազակին խստացար երկինքի արքայութիւնը, դո՛ւն որ ա'յնչափ բաւրի ես ու ա'յնչափ ներող, հաճէ՛ք քու տառապանքի խաչիդ վրայէն գթութեան ախնարկ մը նետել իմ վրաս ու բովանդակ մարդկութեան վրայ...

Սեւանիք Ե. Թ.

ԱԶԳԱՅԻՆ

Բազար կիւնիւ չհրկմիջտէ պու՛ճ լունան քիլիսէլէրիմիջտէ Ծաղկաղարդ վէ Դուրբացէք մէրասիմի մութան:

Տէֆֆերիանէն նշգարեթիւն՝ Շուրաի
տէվլէթ ազաւորտան Զիւս բաշա հազ-
րէթլէր թախին. Այսոն միւթէսարբֆլը-
ղը՝ Լազգիէ միւթէսարբֆը սապզը Շէմ-
սի բաշանէ, Բուժլի գաղաւթըրլիկի Ա-
նասուռ բանէլիլէրիտն Մահմուտ Գեա-
միւ էֆ. եւ թէֆլիղ. Մաթպուսթը ճնկե-
պիւնէ իտարնէ միւթլիղլէրիտն Ալրամ
Ֆերուսի, Մաթպուսթը Օսմանիէ քնաթի-
պի Հազըզ, Դոսովս Վիլանիէն ղէֆլէ-
րտար Ապարիւր Բանձան, վէ Եսանս վէ
Շոգորա միլանէթլէրի ապիւն միւթէթթի-
շի Էմին էֆլէրէ ուլաս Վվլէրի, սանսիւր
Կրաթի էֆ. եւ վէ Հաւէպ Վիլանէթի Բաթ-

